

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՂ

### Յ. Ղ. ՄԻՐՋՈՅԱՆ

Գրիգոր Նարեկացու անունով մեզ հասած մատենագրական ժառանգության մեջ կան մի շարք գործեր<sup>1</sup>, որոնց հեղինակային պատկանելության հարցն առայժմ մնում է չլուծված: Դրանցից ամենածավալունն ու արժեքավորը «Արքոյ վարդապետի յոքներանեան մենատրի Գրիգորի համառոտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ դիւանադպրի»<sup>2</sup> երկն է (այսուհետև՝ Խրատ): Վերջինիս Նարեկացուն պատկանելու հարցն առաջին անգամ կասկածի տակ է դրել Հովհաննէս Ջոհրապլանը<sup>3</sup>: Նրան հետևել են Նոր հայկազյան բառարանի հեղինակները, որոնք «Ցուցակ մատենից և մատենագրաց, ըստ կարգի համառոտագրութեանց՝ գոր վարենք յընթացս գործոյս» բաժնում Խրատը՝ որպէս անանուն գործ, համառոտագրել են «Գր. հր.» ձևով և ավելացրել. «Այն է հրահանգք հաւատոյ և բարի վարուց՝ միջակ և ընտիր ոճով և գեղեցիկ կարգաբանութեամբ. գոր իրաւամբք ոմանք դասեն ի կարգ Նարեկի. և այլք տարտամ թողուն զմականունն. և ոչինչ անյարմար դատին Գրիգորի Սկևռացոյ. մանաւանդ զի յտակ զանազանութիւն անուանց առաքինութեանց և մոլութեանց յայտ առնէ զմատենագիրն թարթափեալ և ի գիրս այլոց ազգաց: Բայց յայսր ամենայնի վերայ՝ առաւել Նարեկացոյն է անկ գործս: Գո՛րծ էր գտանել. թէ ո՞ իցէ և յորո՛ւմ ժամանակի Վարդան դիւանադպիրն, որ եղև խնդրող գեղեցիկ վարդապետութեանս»<sup>4</sup>: Ինչպէս տեսնում ենք, բառարանագիրները մի կողմից հակված են Խրատը Նարեկացուն համարելու մտքին, իսկ մյուս կողմից չեն մերժում Գրիգոր Սկևռացուն պատկանելու հնարավորությունը: Այդ է պատճառը, որ թե՛ Նարեկացու և թե՛ Սկևռացու աշխատությունները կարճագրելուց հետո հարկ են համարել ավելացնել՝ «Տե՛ս և Գր. հր.» (հմմ. հ. 1, էջ 16 և 19): Խրատի հեղինակային պատկանելության հարցը լուծելու համար նրանք կարևորել են հատկապէս Վարդան դիւանադպրի իսկության և ապրած ժամանակի հետ կապված խնդիրների լուծումը, որը, ըստ էության, ունի երկրորդական նշանակություն:

Այնուհետև Նարեկացու երկերի վեցնետիկյան հրատարակությունն իրականացնող հայր Սուքիաս Սոմալը թեև Խրատը գետնեղել է բանաստեղծի «Մատենագրութիւնք»-ում, սակայն ավելի է ուժեղացրել գոյություն ունեցող կասկածը՝ գտնելով, որ «իմաստասիրական ոճ այսր ճառի չմիաբանիցի Նարեկացոյ

<sup>1</sup> Պ. Խաչատրյանը «Գ. Նարեկացուն վերագրված գործեր» խորագրի տակ քննության է առնում 8 աղոթք, 3 կրոնադավանաբանական երկ, 2 մեկնություն և 1 դամբանական (տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 119-157):

<sup>2</sup> Տե՛ս «Արքոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վեցնետիկ, 1840, էջ 483-533: Այսուհետ այս հրատարակությունը հղելու ենք՝ Մատենագրութիւնք և էջը, իսկ Խրատից մեջբերումներ կատարելիս տեքստում՝ փակագծերի մեջ, նշելու ենք միայն էջը:

<sup>3</sup> Տե՛ս Բ. Սարգիսյան, Արքոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք և մատենագրութիւնք. Վեցնետիկ, 1907, էջ ԺԿ:

<sup>4</sup> «Նոր բառագիրք հայկազեան լեզուի», հ. Ա, Եր., 1979, էջ 10-11:

քերթողական ոճով»<sup>6</sup>: Բնականաբար ոչ միայն Նարեկացու, այլև ցանկացած հեղինակի իմաստասիրական և քերթողական ստեղծագործությունների ոճերը չեն կարող նույնը լինել, քանզի իմաստասիրությունն ու քերթությունը, ի թիվս այլևայլ տարբերակիչ հատկանիշների, իրարից զանազանվում են նաև ոճական առումով:

Հայր Սոմալից հետո այս հարցին վերջին անգամ հանգամանորեն անդրադարձել է Պ. Խաչատրյանը, որը, հակադրվելով Բ. Սարգիսյանին, գտնում է, որ վերջինին «հակառակ պնդումը՝ ցույց տալու մի կողմից՝ «Ողբերգության մատյանում», մյուս կողմից՝ «Համառոտիք բան խրատու» գրվածքում նկատվող ազդեցությունը 4-րդ դարի բյուզանդական մատենագիր Եվագր Պոնտացուց և շեղակի անհիմն եզրակացությունը, թե, ուրեմն, Նարեկացին է այդ Խրատի հեղինակը, ամենևին պատճառաբանված չէ: Եթե նույնիսկ կա այդ ազդեցությունը, ապա դա միայն մեկ հեղինակի վերագրելի հանգամանք չէ, քանի որ թե՛ Նարեկացին և թե՛ Խրատի հեղինակը, ամեն մեկը լուրովի, կարող էին հետևել հույն աստվածաբանին: Բանն ուրիշ կլիներ, և Սարգիսյանի հետևությունը կշիռ կունենար, եթե նա փորձեր թեկուզ բովանդակային հարազատություն տեսնել ստուգապես Նարեկացուն պատկանող երկերի և Խրատի միջև»<sup>7</sup> (ընդգծ. իմն է - Հ.Մ.):

Ավարտելով հարցի քննարկումը՝ բանասերը եզրակացրել է, որ Խրատը «պատահականորեն, առանց լուրջ հիմնավորման է կապվել Նարեկացու անվան հետ: Իրականում այլ մատենագրի գործ է»<sup>8</sup> (ընդգծ. իմն է - Հ. Մ.): Իսկ այլ մատենագիրը, հեղինակի կարծիքով, Գրիգոր Վկայասերն է՝

«Բանի որ Խրատը թե՛ Նարեկացուն վերագրողները և թե՛ դա հերքողները չեն փորձել համեմատել «ստուգապես Նարեկացուն պատկանող երկերի և Խրատի»<sup>9</sup> բովանդակությունը, ուստի ներկա հոդվածում մենք կփորձենք իրականացնել հենց այդ պահանջը:

Իր բնույթով Խրատը պատկանում է միջնադարում լայն տարածում ստացած հարցմունք-պատասխանիքի ժանրին: Այսինքն՝ հասցեատերը՝ Վարդան դիվանադպիրը, հեղինակին նախապես ուղարկել է գրավոր հարցեր, որոնց նույն ձևով պատասխանել է հեղինակը: Ծիշտ է, Խրատի հեղինակը ատերևույթ չի պահպանել հարցերը, բայց աշխատության տոմից, ոճից և առանձին դեպքերում պահպանված հարցերից ստանում ենք հենց այդ տպավորությունը: Ունենալով որոշակի հասցեատեր՝ Խրատը գրված է աշխույժ ու կենդանի ոճով, հեղինակն ասես զրուցում է մեկի հետ, որին դիմում է երկրորդ դեմքով: Օրինակ, նրանում կարդում ենք. «Իսկ ինձ առ քեզ, ով սիրեցեալ անձին իմոյ» (էջ 484), «Բայց դու զգոյշ

<sup>6</sup> Մատենագրութիւնք, էջ 483:

<sup>7</sup> Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 143: Ի դեպ, Բ. Սարգիսյանը Եվագր Պոնտացուց կրած ազդեցության հիման վրա չէ, որ Խրատի հեղինակ է համարում Նարեկացուն, այլ վկայակոչում է Մ. Չամչյանի տեսակետը, համաձայն որի Խրատը «ոչ միայն Գր. Նարեկացույ վատերական գործ կենթադրել, այլ Վարդանն ալ Արծրունեաց Սենեքերիմ թագաւորին դիւանադպիր եղած, բայց առանց պատմագրէ մը կոչում ընելու: Սակայն վատերականութեան անենագորեղ կրուանը տուած է արդէն Խրատներուն հեղինակը: Արդ՝ սա ազատաբար մէջ բերելէն վերջ բոլոր իր հաւատալիքը, ապա այսպէս կը գրէ. «Ջայս վայելչական կարգ հաւատոց գտցես ե՛ւ լընդհանրական դաւանութիւն սուրբ և տիեզերական ժողովոյն Նիկիոյ» և այլն: Եւ իրօք, երբ մենք կը գտնենք Նարեկին մէջ (եր. 201 և 428) երկիցս Նիկիական հաւատոյ դաւանութիւնը, այլ եւս տարակուսելու բանատր պատճառ չունինք՝ որ Խրատներուն վրայ խորագրուած մենատր Գրիգորը՝ նոյն ըլլայ Նարեկի հեղինակին հետ» («Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացույ վարք և մատենագրութիւնք», Վենետիկ, 1907, էջ ԸԿ: Ընդգծ. հեղ. է - Հ. Մ.):

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 150:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 149:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 150:

լեր՝ գործով փութալ ի կատարումն **ասացելոցս**» (Ա. տ.), «Ջի ըստ որում **ես** ի յոչ տայն **դատապարտիմ** իբր զլացող տէրունեացն, նոյնպէս և **դու** յոչ հետեւել գործով՝ տուեցելոցն» (Ա. տ.) ևն: Ավելին, առանձին դեպքերում հեղինակը կրկնում է իր ստացած գրավոր հարցը: «Սակայն գիտել պարտ է,- գրում է նա,- զի զամենայն մեղսն մինչ ի մանուսն իջանելով՝ ոչ ոք կարէ զմտաւ ածել կամ խոստովանել, թէ և բիւր անգամ ջանայ: Եւ գրեսցիր՝ թէ զգործոցն կարէ յիշել և խոստովանել, իսկ զխորհրդոցն կամ զբանիցն **ո՞րպէս**: Եւ եթէ յիմար ասելն և մորս՝ զեհեհին դատապարտէ, և դատարկաբանութիւնն ի պահանջանս համարոյ ածէ, **ո՞րք** է որ զայս ամենայն մի ըստ միոջէ զմտաւ ածել կարէ և **խոստովանել**» (էջ 528, ընդգծ. իմն է - Հ. Մ.): Փաստորեն հեղինակը միանշանակ հայտնում է, որ Վարդան դիվանադպիրը հարցերը տվել է գրավոր, և ինքը ներկա դեպքում վերարտադրում է դրանցից երկուսը: Եթէ Վարդան դիվանադպիրը հարցերը հեղինակին ներկայացրել է գրավոր, ապա, ամենայն հավանականությամբ, նրանք գտնվել են տարբեր վայրերում:

Ասեմք նաև, որ Խրատի հեղինակային պատկանելության հարցի լուծումն ունի ոչ միայն նարեկացիագիտական, այլև ընդհանրապես հայագիտական կարևորություն մի քանի առումով: Բանն այն է, որ **նախ՝** նրանում քննարկվում են բարոյափիլիսոփայական բազմաթիվ հարցեր, որոնց տրված պատասխաններն արժեքավոր են հայ փիլիսոփայական մտքի զարգացման պատմական ընթացքը հասկանալու իմաստով: **Երկրորդ՝** հեղինակը հաճախ իր այս կամ այն տեսական դրույթը հիմնավորելու համար բերում է հետաքրքիր օրինակներ ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի, սոցիալական հարաբերությունների, բարքերի, սովորույթների, գիտական ու գեղագիտական, բարոյական ու իրավական ըմբռնումների վերաբերյալ, որոնք այսօր ունեն պատմամասնական բացառիկ նշանակություն: **Երրորդ՝** այն կարող է մեծապես նպաստել Նարեկացու կենսագրության և մատենագրական ժառանգության հետ կապված մի շարք հարցերի լուծմանը: **Չորրորդ՝** Խրատը հարուստ նյութ է մատակարարում հայոց լեզվի պատմության, ի մասնավորի հայոց լեզվի բառապաշարի հարստացման գործում Նարեկացու խաղացած բացառիկ դերը հասկանալու համար: Մինչդեռ հեղինակային պատկանելության հարցում տեղ գտած տարակարծությունների ու թյուրըմբռնումների պատճառով Խրատն ինչպես հարկն է չի արժանացել հայոց լեզվի պատմության մասնագետների ուշադրությանը: Նույնիսկ Նոր հայկազյան բառարանի հեղինակները թեև լայնորեն օգտագործել են վերջինիս ընձեռած հարուստ նյութը, բայց հեղինակի հարցում չունենալով հստակ կողմնորոշում՝ փաստորեն դրսևորել են անորոշ վերաբերմունք, այսինքն՝ այն չի դիտվել որպես Նարեկացու կամ թեկուզ Ակեռացու գործ, այլ ներկայացվել է որպես ինքնուրույն, ըստ էության անանուն սկզբնաղբյուր: Ասվածի լավագույն օրինակ է **Անփափագ** բառհոդվածը. «**Անփափագ**, կամ **Անփափաք**. ա. Որ ոչն փափաքէ. անյօժար. անփոյթ. Անփափաք են նոքա միայն, որք ոչ զճաշակն առին. **Լմբ. սդ**: Ծշմարիտ փառացդ անփափագ. **Սկևռ. աղ**: Դատապարտելով զնոսա վասն անփափագ լինելոյն. **Գր. հր.**» (հ. 1, էջ 251): Ինչպես տեսնում ենք, սկզբնաղբյուրային վկայությունները գրեթե համարժեք են, բայց բառարանագիրները, հավանաբար առաջ-հորդվելով ժամանակագրական սկզբունքով, առաջին տեղում դրել են **Լամբրոնացուց** վերցված օրինակը, իսկ վերջին տեղում՝ Խրատից: Նույն հատորի նույն էջում «**Անփափակ**» բառհոդվածում, հիմք ընդունելով բառի օգտագործման իմաստային առումները, նախ տրված է Խրատից վերցված օրինակը, իսկ ապա՝ Նարեկացուց երկու օրինակ: Կան նաև դեպքեր, երբ Սկևռացին և Խրատի հեղինակը նույն բառն օգտագործում են գրեթե նույն իմաստով. ընդ որում, բառարանում որպես աղբյուր վկայվում են միայն այդ երկուսը, բայց առաջին տեղում հեղինակները նշում են Սկևռացուն, ապա՝ Խրատը (տե՛ս օրինակ՝ «Եղեռնագործութիւն» բառհոդվածը, հ. 1, էջ 654): Ոչ միայն այլ հեղինակների, այլև նույնիսկ Նարեկա-

ցու պարագային, եթե բանն օգտագործված է նույն իմաստով, բայց առաջին տեղում հիված է Նարեկացու մեկ այլ երկ և նոր միայն խրատը (տե՛ս օրինակ՝ «Կանխամայնություն» բառհողովածը, հ. 1, էջ 1050), իմ կարծիքով, մասամբ թույլ է տրվել պատմական անճշտություն: Ի հաստատումն ասվածի՝ բերենք միայն մեկ օրինակ. խրատի սկզբնամասում հեղինակը գրում է. «Անեղ և եղելոց էակ՝ իմանալեաց և զգալեաց. լոյս և լուսոյ արարիչ. կեանք և կենդանարար ամենայնի. իմաստութիւն և իմաստարար բոլորից. սուրբ և սրբոց սրբարար. բարի և բարեաց պարգևաբաշխ. զօրատր և զօրացուցիչ զօրացելոց. կատարեալ և կատարելոց կատարելագործ. լի և լցուցիչ կարօտելոց. յաիտենական և յաիտեանց գոյացուցիչ. անժամանակ և սահմանիչ ժամանակաց» (էջ 487): Այս մեկ նախադասության տասնհինգ բառերի համար (էակ, իմանալեաց, լուսոյ, արարիչ, կենդանարար, ամենայնի, բոլորից, սուրբ, սրբարար, պարգևաբաշխ, զօրատր, կատարեալ, լի, գոյացուցիչ, անժամանակ), ի թիվս այլևայլ աղբյուրների, վկայվում են նաև Նարեկացու երկերը: Ընդ որում, դրանցից տասներեքի համար վկայվում է Մատյանը (երբեմն նույնիսկ տասը և ավելի անգամ), սուրբ բառի համար՝ Երզ երզոցի մեկնությունը, իսկ էակ բառի համար՝ Խաչի, Աստուածածնի և Առաքելոց ներբողները: Ասենք նաև, որ այդ բառերից ոչ մեկի համար չի հիվում խրատը, իսկ իմաստարար և կատարելագործ բառերի համար վկայված է խրատը, ընդհակառակը, չի վկայված Նարեկացու որևէ ստեղծագործություն: Փաստորեն, խրատը Նարեկացուն պատկանելի ոչ պարզ ստացվում է, որ նրա ընդամենը մեկ նախադասության մեջ գործածված տասնյոթ բառ այս կամ այն ձևով վկայված են Նոր հայկազյան բառարանում: Մեն-միայն այս փաստը շատ բան է ասում խնդր առարկա աշխատության լեզվական հարստության մասին:

Բնավ նպատակ չունենալով զբաղվելու խրատի լեզվական արժանիքների քննությամբ՝ կցանկանալի մասնագետներին ուշադրությունը հրավիրել դրա վրա: Բանն այն է, որ Նոր հայկազյան բառարանի տվյալների մոտավոր հաշվումներից պարզվեց, որ խրատը նրանում վկայված է ավելի քան հարյուր անգամ, որից առկվազն տասնյոթ անգամ՝ իբրև միակ աղբյուր: Այդ բառերն են՝ **Ախտաշարժություն**, **Ականահանգէտ**, **Անկարգաւորաբար**, **Գեղեցկացուցիչ**, **Գերանճառ**, **Գողակցութիւն**, **Դիրակատար**, **Խոհագործ**, **Հատընտիր լինել**, **Հարել**, **Հրակիր**, **Մարգարտատիպ**, **Յոգնաբոյս**, **Յոգնաշարժ**, **Ոսկիանման**, **Որոգայթադրութիւն** և **Վարակումն**: Առանձնապէս ուշագրավ է այն փաստը, որ դրանցից երեքը՝ **Ականահանգէտ**, **Մարգարտատիպ** և **Ոսկիանման**, գործածված են նույն նախադասության մեջ: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ հարկ են համարում բերել ամբողջ նախադասությունը. «Եւ որպէս փեսայն. թէպէտ և հարսն անթերի անդամօք մարմնոյն, բայց կամի և զարդարանս պէսպէս զգեցուցանել հա/ր/սինն՝ իրաքանչիւր յարմար ըստ պատշաճի անդամոցն, ի զգեստոց և յոսկւոյ և ի մարգարտոյ և ի քարանց պատուականաց, զի առաւել գեղեցկացի ի հաճութիւն մի՛ն, այսպէս և Քրիստոս կամի զառաքինի ոգին ոչ միայն ի չարեաց ազատ լինել ըստ իրաքանչիւր մասին և զգայութեան. զի այն է անարատութիւն անդամոցն՝ յորժամ մեղաց խառնուած ոչ ունիցի, բայց ոչ այսու շատանայ. այլ կամի իրաքանչիւրոցն պէսպէս ոսկիանման և մարգարտատիպ և ականահանգէտ առաքինութեամբք ըստ իրաքանչիւր բնարականացն ներգործութեանց զարդարել» (էջ 532, ընդգծ. իմն է - Հ. Մ.): Դիտելի է, որ խրատը՝ իբրև հերթական աղբյուր, վկայվում է նաև «Առաքինություն» բառի համար, բայց «Տե՛ս ճոխագոյն» նշումով:

Նոր հայկազյան բառարանի հեղինակները խրատը, թեկուզ թեականորեն, վերագրել են Գրիգոր Սկևռացուն՝ ելնելով պարզապէս խրատի և Սկևռացու ադրթքների ինչ-ինչ ընդհանրություններից: Քանի որ այս հարցի քննարկումը կարող է չափից ավելի ծանրաբեռնել ասելիքս, ուստի թողնում են մեկ այլ առիթի:

՝ Ի դեպ, Նոր հայկազյան բառգրքում միայն Նարեկացիով վկայված են Ոսկեփայլ, Ոսկեփառ, Ոսկիակիր և Ոսկիապէս բառերը:

Առայժմ ասեմ միայն, որ Սկևռացու անունով հայտնի աղոթքներում զգացվում է Նարեկացու բառապաշարի ակնհայտ ազդեցությունը:

Նարեկացու կենսագրությունից հայտնի է, որ անառարկելիորեն նրա գրչին պատկանող կարևորագույն ստեղծագործություններից հնագույնը «Մեկնություն երգոց երգոյն Սողոմոնի»<sup>10</sup> (այսուհետ՝ Մեկնություն) երկն է, որը, ինչպես դեռ կտեսնենք, իր բնույթով համահունչ է Խրատին, հետևաբար ճիշտ կլինի նախ համաստել դրանց բովանդակությունները: Դա նպատակահարմար է նաև այն իմաստով, որ բանաստեղծի ստեղծագործություններից Մեկնությունը փաստորեն միակն է, որ ունի գրության ստույգ թվական՝ 977 թ.: Ավելին, հեղինակի հիշատակարանից իմանում ենք, որ ինքն այն գրել է Աճձևացյաց գավառի թագավոր Գուրգեն-Խաչիկի պատվերով: Ընդ որում, Նարեկացին սկզբում մերժել է թագավորական ցանկությունը, բայց երբ թագավորը երկրորդ անգամ պնդել է իր առաջարկությունը, ստիպված հանձն է առել՝ հիշելով աստվածային պատգամը՝ «հպատակ կացէք թագաւորաց»<sup>11</sup>: Ի տարբերություն Նարեկացու գեղարվեստական ստեղծագործությունների՝ Մեկնությունը, թեև գերծ չէ գեղարվեստական տարրերից, բայց ունենալով կրոնաստվածաբանական ուղղվածություն, կարող ենք համարել բարոյափիլիսոփայական բնույթի աշխատություն: Ընդ որում, թե՛ քննարկված հարցերի և թե՛ դրանց տրված պատասխանների տեսակետից այն չափազանց հոգեհարազատ է Խրատին: Իրավամբ ծագում է շատ կարևոր հարց, եթե Խրատը պատկանում է Նարեկացու գրչին, ապա ե՞րբ է գրվել այն՝ Մեկնությունից առաջ, թե՞ հետո: Այս հարցին պատասխանելու համար ակամա ծագում է մեկ այլ հարց, իսկ որտեղի՞ց, ո՞ւմ միջոցով կամ ինչպե՞ս էր Արծրունի Գուրգեն-Խաչիկ թագավորը ճանաչել տակավին երիտասարդ, դեռևս գիտական ու գրական ակնառու ժառանգություն չստեղծած (այդպես է ներկայացվում բանաստեղծի կենսագրությունը) Գրիգոր Նարեկացուն, որ համառորեն պահանջել է մեկնել շատերի կողմից վաղուց մեկնված, համաշխարհային գրականության այնպիսի քացատիկ ստեղծագործություն, ինչպիսին Երգ երգոցն է: Կարծում եմ, Նարեկացին մինչ այդ պետք է որ գրած լիներ համանման որևէ աշխատություն կամ Երգ երգոցի մասին ինչ-որ առիթով արտահայտած լիներ այնպիսի մտքեր, որոնց ծանոթանալուց հետո Աճձևացյաց թագավորը վստահությամբ լցվեր նրա կարողությունների հանդեպ և ըստ այդմ պահանջեր գրել Երգ երգոցի մեկնություն: Չմոռանանք նաև, որ Վասպուրականի թագավոր Աբուսահլ Արծրունու որդի Գուրգեն-Խաչիկը հագիվ թե ուսանած լիներ Գրիգոր Նարեկացու հետ, որը մանուկ հասակում զրկվել էր մորից, իսկ պատանեկան տարիքում՝ հորից և իբրև բանադրվածի զավակ ապրել և ուսանել էր մոր հորեղբոր՝ Անանիա Նարեկացու խնամակալության ներքո, վանական միջավայրում: Այլ խոսքով՝ Գուրգեն-Խաչիկը Գրիգոր Նարեկացուն կարող էր ճանաչել Երգ երգոցի մեկնությունից (977 թ.) առնվազն 1-2 տարի առաջ ստեղծած գրական արժեքավոր երկի կամ երկերի հիման վրա: Այստեղից ենթադրում եմ, որ Խրատը ոչ միայն պատկանում է Նարեկացու գրչին, այլև գրվել է Մեկնությունից առաջ, որին ինչ-որ ճանապարհով ծանոթացել է Գուրգեն-Խաչիկ Արծրունին, հիացել հեղինակի մտածողությամբ, ուստի, որպես աստվածասեր քաղաքական գործիչ, ցանկացել է նույն ոգով մեկնված տեսնել Երգ երգոցը և պատվիրել է Նարեկացուն իրականացնել իր այդ ցանկությունը: Իսկ երբ Նարեկացին մերժել է թագավորի պատվերը, վերջինս կրկնել է այն իբրև հրաման: Այս վարկածը հաստատելու համար, անշուշտ, ունենք որոշակի փաստեր: Փորձենք ներկայացնել դրանցից առավել կարևորները:

Պարզվում է, որ Խրատի հեղինակը բազմիցս վկայակոչում է Սողոմոնին: Ընդ որում, չորս անգամ գործածում է «ըստ առակողին» (տե՛ս էջ 483, 500, 511,

<sup>10</sup> Տե՛ս Մատենագրությունը, էջ 271-367:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 271:

530), երկու անգամ՝ «Երգ երգոց» (տե՛ս էջ 515, 532) և մեկ անգամ «ըստ Սողոմոնի» (տե՛ս 493) արտահայտությունները: Ասեճք նաև, որ թեև Խրատում Երգ երգոցն ուղղակիորեն վկայակոչվում է ընդամենը երկու անգամ, բայց սկզբից մինչև վերջ համահունչ է Երգ երգոցի նարեկացիական մեկնության ոգուն, քանզի, ինչպես կտեսնենք, թե՛ մեկում և թե՛ մյուսում քննարկվում ու նույնանման լուծում են ստանում ինչպես նույնական, այնպես էլ տարաբնույթ հարցեր:

Երգ երգոցի մեկնության հետ Խրատը, բացի բովանդակային ընդհանրություններից, ունի նաև արտաքին-ձևական նմանություն. թե՛ մեկը և թե՛ մյուսը գրքվել է որոշակի անձի պատվերով կամ պահանջով. այսինքն՝ դրանք ունեն որոշակի հասցեատեր, ուստի երկուսի հեղինակներն էլ ջանում են հասցեատիրոջը բացատրել ու սովորեցնել ինչ-որ բան, նրան դաստիարակել կրոնական բարոյականությանն ու անխառն աստվածասիրությանն ոգով:

Նպատակների ընդհանրությունը պայմանավորել է նրանց կառուցվածքային ընդհանրությունը. երկուսն էլ ունեն համառոտ ներածություն, որտեղ հեղինակները բացատրում են դրանք գրելու դրդապատճառներն ու հանգամանքները, ապա անցնում բուն բովանդակության շարադրանքին: Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում ներածության մեջ դրվատվում է հասցեատիրոջ կամ պատվիրատուի հոգևոր սնունդ ստանալու ձգտումը, որից հետո հեղինակը բացատրում է, թե ինչու է ինքը հանձն առել կատարելու իր համար դժվարին գործ: Այս դեպքում ուշագրավ է հատկապես այն, որ թեև բացատրությունը տրվում է լեզվական տարբեր միջոցներով (առաջին հերթին նկատի ունենք բառապաշարների տարբերությունը), բայց ըստ էության նույնն է դրանց մտածական-տրամաբանական կառուցվածքը: Եթե Խրատում որպես հիմնական դրդապատճառ ընդունվում է ավետարանական այն միտքը, համաձայն որի «ոչ հացի միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանի որ ելանէ ի բերանոյ աստուծոյ» (էջ 484), ապա Մեկնության մեջ մի կողմից դրվատվում է Անձնացյաց թագավոր Գուրգեն-Խաչիկի գրասիրությունն ու աստվածասիրությունը, իսկ մյուս կողմից, գիտակցելով Տիրոջ հրամանը՝ «հնազանդ լինել թագաւորաց հրամանաց» (էջ 271), հեղինակը հանձն է առնում կատարել թագավորական պահանջը: Անցնելով բուն նյութի շարադրանքին՝ երկուսն էլ ընտրում են ելակետային ինչ-որ հիմք, որի վրա կառուցում են իրենց խոսքը: Ըստ այդմ, Խրատի հեղինակը ելակետ է դարձնում դավանանքը, իսկ Մեկնության հեղինակ Նարեկացին՝ «Երգ երգոց» արտահայտությունը: Խնդրո առարկա աշխատություններում կան լեզվական ու մտածական բազմաթիվ նմանություններ, որոնցից կցանկանայի բերել մի քանիսը.

### **Խրատ**

Այլ յառաջագոյն ասացի, թէ ոչ ինչ գոյ ի վերայ երկրի ի միոյ տարրէ գոյացեալ (էջ 519):

Այլ լուր ով դու... (էջ 528):

Եւ եթէ ախորժէք, յեղելոց և ի գրելոց իրաց ստուգեցից զասացեալս (էջ 510):

### **Մեկնություն**

Արդ յառաջաբանի գրոցս ասացի, թէ ոչ գոյ յարմարանք մարգարեականք (էջ 359):

Լուր և մեկնեցից (էջ 286):

...զցանկացողսն ընդարձակ բանից ի Նիսացիս Գրիգոր յուղարկեցից (էջ 296):

Հաճախ թեև Խրատում ու Մեկնության մեջ քննարկվում են տարբեր հարցեր, բայց հեղինակները դրսևորում են նույնանման մտածողություն: Այդ տեսակետից ուշագրավ է հատկապես մարդու սխալականության և Աստծու մարդասիրության ու ներողամտության մասին հեղինակների դրսևորած մտածողությունը.

«ԺԵ. Հաւատալ և ապաշխարութեան մեղաց. գոր մարդասերն աստուած, որ ոչ կամի զմահ մեղաւորի, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէ և զկեալն. ետ օճատ լուացման և սրբութեան եկեղեցւոյ: Ջի թէպէտ և առաջին կամք նորա է մնալն մեր սրբութեամբ և արդարութեամբ յանմեղութիւն, այլ որպէս արարիչ բնութեանս՝ զիտէ զտկարութիւնս մեր զի դիրագթելիք ենք և սխալողք. և հանապագ ի վայր հակիմք ի բարձրութենէ առաքինութեան. ունիմք և մարտակից թշնամի յոքնահնար և բազմաբունեստ և ի չար առնել իմաստուն... զի հայրն բարեբար գորդին ետ ի մահ վասն մեր, և միածինն զհնքն, և հոգին սուրբ զփառակիցն, ետ և զխոստովանութիւն... Ջի եթէ յարութեան հաւատացեալ և դատաստանի ակն կալեալ՝ օր ըստ օրէ ի չարիս յաճախենք, զի՞նչ ոչ գործէաք՝ եթէ ոչ էր երկիւղ դատաստանին. ապաքէն անխտիր բերեաք յամենայն գարշութիւնս մեղաց, ի սպանութիւն, ի զրկանս. յանիրաւութիւն, ի յափըշտակութիւն. ի պոռնկութիւն, յարուագիտութիւն. ի հպարտութիւն, ի նախանձ, յատելութիւն, և ի սոցին մմանս պէսպէս և բիրապատիկ չարիս» (էջ 491-492, ընդգծ. իմն է - Հ. Մ.):

«Եւ հարսն և քոյր և պարտէզ՝ հեթաճոսք յաղագս այնորիկ կոչին. զի որպէս հարսն զսրբութիւն և զէր փեսային խօսեցելումն առն իրում միայն պարտի պահել. և եթէ ոչ պահէ և զայլ ոք սիրէ, արդե՞նաց զանկողին փեսային և օտարացաւ ի նմանէ. նոյնպէս և հաւատացեալք, որ ի Քրիստոս միացան մկրտութեամբ, և հաղորդք եղեն նորա մարմնոյ և արեանն, և ապա յետ այնորիկ ի սեր աշխարհիս որոշեն զհնքեանս, և միանան ի պէսպէս ցանկասիրութեան ցնորս, ի պոռնկութիւն, ի սպանութիւն, յամբարտաւանութիւն, յազահուութիւն. ի փառասիրութիւն, ի հեռ, ի նախանձ, և որ սոցին նման չարիք, լուծին զփեսային Քրիստոսի սէրն, և զուխոն՝ որ ընդ իրեանց. և ուսուցչին չարեաց սատանայի հարսնացան. և յիրաւի ընդունին զանվրէպ տանջանն: Սակայն թէ դառնան առ նա, և յայնմ ևս մարդասէր է տէրն. և զի ողորմած է և ոչ կամի զմահ մեղաւորին. վասն որոյ և մարմին իսկ առ, և զմահ անարգանաց մեռաւ» (էջ 320, ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Թե՛ Խրատի հեղինակի և թե՛ Նարեկացու համոզմամբ Աստված, լինելով մարդասեր, չի ցանկանում, որ մարդ արարածը շեղվի ճիշտ ճանապարհից, իսկ շեղվելու դեպքում եթէ զղջում ու ապաշխարում է, ապա անպայման ներվում է Աստծու կողմից: Հենց այդ նպատակով էլ Աստված զոհաբերեց իր Միածին Որդուն, որը, հանուն մարդու փրկության, զիտակցաբար զնաց ինքնազոհաբերության: Հարկավ, մարդուն ճիշտ ճանապարհից շեղողը նույն սատանան է, որը Խրատում կոչվում է «յոքնահնար և բազմաբունեստ և ի չար առնել իմաստուն». իսկ Մեկնության մեջ՝ չարեաց ուսուցիչ: Ծիշտ է. նույն բանը ասված է լեզվակաճ տարբեր միջոցներով, բայց պետք է նկատի ունենալ, որ տարբեր են ոչ միայն շարադրվող նյութն ու շարադրանքի ձևը, այլև հասցեատերերը: Եթէ Խրատի հասցեատերը հեղինակի հարազատն ու սննդակիցն է, ապա Մեկնության հասցեատերը... թագավոր է: Իսկ դա նշանակում է, որ նույն հեղինակը չէր կարող նրանց հետ իր գրույցը վարել նույն ձևով: Բերենք միայն մեկ օրինակ.

Արդ աստուածային օրենսդիրքն որպէս գաւորսն որոշեցին պահոց և ուսելոյ. նույնպէս և զկերակուրսն զանազանեցին. զգօրատրսն և զհեշտալիսն և զախորժականսն մարմնոյ՝ զորս պատշաճ դատեցան՝ օրինադրեցին ոչ

«Այս այն է, որ ասէ, թէ «Եղ զնա աստուած ի դրախտին փափկութեան. գործել զնա և պահել»: Ոչ եթէ գործոյ ինչ, կամ պահպանութեան պէտս

ուտել յաւորս պահոց. ոչ թէ զի կարօտութիւն ունի աստուած մերոց պահոցն, այլ զի երևեսցուք ընդ հնազանդութեամբ հրամանի նորա: Ճայս և ի մարդիկ է տեսանել. զի ի վերայ ընդ ձեռամբ անկելոցն ոչ այնքան զմեծամեծսն կամ զփոքունսն քննեն զպատճառս, որքան զանհնազանդութիւնն և զարհամարհանս հրամանի իրեանց. այսպէս ամենայն ումեք պարտ է հնազանդել աստուծայնոյ օրինադրութեանն զոր ի ձեռն եկեղեցւոյ առաջնորդաց կարգեաց (էջ 520):

Բարեբախտաբար ունենք նաև այնպիսի դեպքեր, երբ Խրատում և Մեկնություն մեջ քննարկվում են նույն հարցերը, տրվում նույնանման լուծում: Օրինակ, բացատրելով զգայարանները, ի մասնավորի լսողությունը, արտաքին աշխարհի վնասակար ազդեցություններից գերծ պահելու օգտակարությունը, Խրատի հեղինակը իր հարազատ Վարդան դիվանադարին, ի դեմս նրա՝ ընդհանրապես հավատացյալին. խորհուրդ է տալիս խուսափել մարդու անձը թուլացնող հոտեր շնչելուց. այլ շնչել միայն Քրիստոսի կենարար բույրը:

Նույն միտքը Մեկնության մեջ Նարեկացին արտահայտում է թագավորների ու թագուհիների օրինակով. և դա ինքնին հասկանալի է. զորուցում էր թագավորի հետ, ուրեմն՝ նրա համար օրինակ կարող էին ծառայել ոչ թե հասարակ մահկանացուները, այլ այն աշխարհի հզորները: Ուստի մեկնիչ Նարեկացին Գուրգեն-Խաչիկ թագավորին հորդորում է հետևել այն մեծերի օրինակին, ովքեր հաճում երկնային հավիտենական կյանքի արհամարհեցին այսերկրային հաճույքներն ու վայելքները:

### *Խրատ*

«Եւ գնոյն դարձեալ բաց Քրիստոսի անուշահոտութեանն, զոր առաքելովքն ծաւալեաց ընդ տիեզերս. ըստ որում և ասէ Պաւղոս. զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեօք ընդ ամենայն տեղիս. և թէ հոտ անոյշ ենք Քրիստոսի առ աստուած ի մէջ փրկելոցն և ի մէջ կորուսելոցն. ուսանց հոտ ի մահուանէ ի մահ, և ուսանց ի կենդանութենէ ի կեանս: Զի որք զգարչութիւն յախտաւոր հոտոյ սիրեցին քան զկենդանացուցիչն զայն, նոցա ի մահ եղև՝ դատապարտելով զնոսա վասն անփափագ լինելոյն: Իսկ որք զգազրալիս զայս արհամարհեցին սիրով ճշմարտին, նոցա տիրապէս կենաց եղև պատճառ: Զոր և ըղձաւորն այսորիկ հարսնն պանծալի յերգոյ երգն հրատարակէ. իւր թափեալ է անուն քո. վասն այսորիկ և օրիորդք սիրեցին զքեզ, և անախտ սիրով յինքեանս ձգեցին զկեանսդ, և միաւորութեամբ կենացդ կենդանացան ի մշտնջենաւոր անմահութիւնն» (էջ 515, ընդգծ. իմն - Հ. Մ.):

ուներ դրախտն, ուր ամենայն վայելչութիւն և աստուածային պահպանութիւնն էր. այլ գործել զարդարութիւն, և պահել զպատուիրանն յառաջագոյն վարդապետեաց» (էջ 283):

### *Մեկնություն*

«Յոր և դու հայեա այժմ. բազում թագաւորք և թագուհիք աստ ըստ իրեանց կամացն գնացին, և յետին օր մահուն իրեանց երթալով՝ ապաշաւելով ելին յաշխարհէ. և յառաջ քան զօր դատաստանին ի խղճէ չարեացն և յահէ դատաւորին ի տանջանս են: Նոյնպէս և բազում թագաւորք և մեծամեծք արհամարհեցին զաշխարհս, և ի վերջին ատուր կոչմանն իրեանց երթալով, յուսովն որ առաջի կայր ինքեանց, ուրախութեամբ հրաժարեցին յաշխարհէ, անճառ զուարթութեամբ բերկրեալ ընդ վաճառն զոր արարին. զի գերկինս ընդ երկրի առին, և յառաջ քան զհատուցման օրն որպէս առեալ աստուտին զվարձսն, և յուրախութեան ևս են. և զաստուած անդադար օրհնեն, որ նոցա ճանաչել շնորհեաց զսնոտի կենացս ոչնչութիւն և յաիտենական կենացն ի խնդիր ելանել: Արդ փեսայ և եղբորորդի, որպէս բազում անգամ ասացի, Քրիստոս կոչի: Փեսայ ասի, զի սիրեաց զմարդիկ որպէս փեսայ զհարսն» (էջ 319-320, ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Փաստորեն Նարեկացին Երգ երգոցի մեկնության մեջ արտահայտում է նույն գաղափարը, որը Խրատի հեղինակն արտահայտել է այլ առիթով՝ հենվելով Երգ երգոցի վրա:

Մեկ ուրիշ հատվածում, խստիվ մերժելով որովմնյամոլությունը, Խրատի հեղինակը գտնում է, որ երկնային կյանքի ուղին անցնում է անլուր դժվարությունների ու չարչարանքների միջով: Գրեթե նույնը, բայց փոքր-ինչ այլ ձևով ու այլ բաներով ասում է նաև Նարեկացին Մեկնության մեջ:

### *Խրատ*

«Արդ որք որովայնին առաւել հպատակեն՝ քան Աստուծոյ պաշտամանն և պատուիրանին, քաջայայտ է զի Աստուած զորովայնն ունին, որում զսպասահարկութիւնն մատուցանեն: Յիրաւի է թշնամիս խաչին կոչէ զայնպիսիսն. վասն զի խաչին անուն չարչարանք են ըստ նորուն տեսուն բանի. որ կամի, ասէ, զկնի իմ գալ, զխաչն առցէ և եկեացէ. այսինքն զչարչարանն: Ջիես, ասէ, ի մարմնագգեցութեան՝ խաչի և չարչարանաց ճանապարհաւ գնացի, որով և ի սեպհականն իմ փառս մտի. և որ զհետ իմ փոքրժէ գալ, և ի փառսն իմ փառաորել, խաչին՝ այսինքն չարչարանացն ճանապարհաւ եկեացէ, որ է նեղ և անձուկ: Ջի որ ընդ լայնն և ընդ արձակն ընթանայ, որ է որկորստութիւնն և այլ մարմնական հեշտութիւնք, նա ոչ ի կեանսն և ի փառսն՝ այլ ի տանջանսն և ի կորուստն ժամանէ: Ջսոյն և առաքեալ յայտ առնէ յասելն. եթէ չարչարանացն Քրիստոսի կցորդ լինիմք, և փառացն նորա հաղորդ լինելոց եմք» (էջ 516, ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Խրատում հեղինակն աստվածաշնչյան մտքերը վկայակոչում է ազատ վերաշարադրանքով՝ չնշելով նույնիսկ առաքյալի անունը, իսկ մեկնության մեջ Նարեկացին թե՛ այս դեպքում և թե՛ ընդհանրապես մեջբերումներ կատարելիս, իբրև կանոն, ավելի ճշգրիտ է, այսինքն՝ նշում է աղբյուրը: Դա այնքան ակնհայտ է, որ հրատարակիչը նույնիսկ 2-3 բառը վերցրել է չակերտների մեջ:

Կան նաև այնպիսի օրինակներ, երբ թե՛ Խրատի հեղինակը և թե՛ Նարեկացին քննարկում են նույն հարցը, տալիս նույնանման լուծում՝ հենվելով հենց Երգ երգոցի վրա: Օրինակ, Խրատի վերջում, ասես ամփոփելով ամբողջ աշխատության բուն ասելիքը, հեղինակը երկրի վրա փեսայի և հարսի, այսինքն՝ տղամարդու և կնոջ սիրուց ավելի ուժեղ ոչինչ չի տեսնում, որ հավասարվեր Քրիստոսի և եկեղեցու սիրուն: Նույն հարցը Մեկնության մեջ ստանում է ավելի սուր հնչեղություն՝ ենթարկվելով ավելի հանգամանակից քննության: Աշխատության հենց սկզբում Նարեկացին հարցը դնում է շեշտակի՝ իսկ ինչո՞ւ է Սողոմոնը Քրիստո-

### *Մեկնություն*

«Այսինքն աստուծոյ յայտնեալ զխորհուրդսն ընդ նեղ լուսանցոյց, բացան աչք հոգւոյս և տեսի որչափ կարելի է մարմնեղէն աչաց տեսանել, և զարթեալ հոգի իմ ի թմբրութենէ մեղաց և յարեալ յիմացմանէ երկրաւոր կրից ի բաց դնելով զախտս, և մեռուցի զիս մեղացն ընդ մեռելոյն մեռեալ՝ որ վասն իմ մեռեալ անմահն: Ջոր և ասէ առաքեալ. «Մեռեալք ընդ նմին մկրտութեամբն ի մահ, որով և ընդ նմին յարեաք հաւատովք աստուծոյ ազդեցութեամբն». և որ զկնին գայ բանն: Արդ յայտ է թէ յառաջ մեռանել պիտոյ է և սպանանել զանդամս մարմնոյ, որպէս հաստատէ զսոյն առաքեալ, և սպա լինի մուտ աստուծոյ և աստուծային խորհրդոցն ի մարդն: ...Դարձեալ, թէ «Նեղ է դուռնն և անձուկ ճանապարհն, որ տանի ի կեանսն»: Արդ յայտ է, թէ նեղութեամբ և մեռելութեամբ հետևի այն ճանապարհն, բայց առ որում սէր փեսային տեղի գտանէ, նորա լուսովն դժուարինն դիրին թուի: Յաղագս որոյ խրախացեալ մեծ առաքեալն Պաւղոս, խրախոյս տայ, ասելով, թէ «Ոչ արժեն չարչարանք ժամանակիս զհանդերձեալ փառսն, որ յայտնելոց են ի մեզ» (էջ 318-319, ընդգծ. իմն է - Հ. Մ.):

սի և եկեղեցու հարաբերությունը նմանեցրել կնոջ և տղամարդու փոխհարաբերությանը, այսինքն՝ ինչո՞ւ երկնայինի մասին պատմել է երկրայինի օրինակով: Պատասխանը նույնքան կտրուկ ու միանշանակ է: Թե՛ հարցադրման և թե՛ պատասխանի կտրուկությունը բխում էր ժամանակի ոգուց և պայմանավորված էր հատկապես թոնդրակյան շարժմամբ, առաջին հերթին ուղղված էր նրա դեմ: Բանաստեղծի կարծիքով, լավ կլինե՞ր այնպիսի վարք ունենայինք, որ մարգարեների մասն աստծու խոսքը գրի կարիք չզգար, այլ տպավորվե՞ր մարդկանց սրտերում: Կարելի էր նաև հրեշտակային սիրտ ունենալ, որպեսզի կարիք չզգացվե՞ր Քրիստոսի և եկեղեցու խորհուրդը կնոջ և տղամարդու հարաբերության օրինակով բացատրելու: Բայց քանի որ մարդը չունի թե՛ մեկ և թե՛ մյուս հնարավորությունը, ուստի մնում է մարմնավորների օրինակով տեսնել հոգևորը, ինչպես պատմում է Սողոմոնը:

Նարեկացու կարծիքով, հարս ու փեսայի անկեղծ, մաքուր ու ազնիվ սերը օտար չէ Քրիստոսի և եկեղեցու հարաբերությանը, ուստի պատահական չէ, որ այն ավարտվում է եկեղեցում: Այստեղից էլ հետևում է, որ ամուսնական մահիճը պղծողը, ըստ էության, պղծում է եկեղեցու խորհուրդը:

### *Խրատ*

«Ունիմք և այլ յարացույց գորատր և ազդողական ի նիթականես յաննիթան, և յախտաւորէս յանախտն բաղդատութիւն: Բայց ինձ մաքրեցէք զմիտս և զխորհուրդս՝ զամենայն հիթական և յախտաւոր մտածութիւն ի բաց բառնալով, և յտակ հայեցուածովք յանարատ խորհուրդն յառեսցուք: Քանզի փեսայ Քրիստոսն է, և կոչի եկեղեցւոյ, և սա հարսն անախտաբար ի բանն միացեալ: Որպէս և փեսաւէրն Յովհաննէս ասէր. որ ունի հարսն՝ նա է փեսայ: Եւ հարսնածուն Պաւղոս՝ խօսեցայ զձեզ, ասէ, իբրև զկոյս սուրբ յանդիման կացուցանել փեսային Քրիստոսի: Իսկ փեսայն եկեղեցւոյ՝ զիր ընդ հարսինն եկեղեցւոյ լինել ի սոյն առակէ, մի թէ մարթ ի՞նչ իցէ մանկանց առազաստի սուգ առնուլ՝ ցորքան զփեսայն ընդ իրեանս ունիցին: Թողում և զԵրզոյ երզոյն բան, որ ի սկզբանէ մինչ ի կատարած զնոյն լեղելէ՝ մարմնաւորօքն զհոգևորսն տպացուցանելով. ոչ այլ ինչ այսու յայտնելով, քան եթէ զառաւելութիւն անչափ սիրոյն Քրիստոսի որ առ հաւատացեալս իւր: Եւ զի՞նչ գոյր այլ ինչ սիրոյ տեսակ յերկրաւորս առաւել քան զփեսայի և հարսին՝ որ կարողանայր զւէրն Քրիստոսի որ առ եկեղեցի՝ յանդիման կացուցանել. նմին իրի և այս առակեցաւ» (Էջ 531-532, ընդգծ. իմն է - Հ. Մ.):

### *Մեկնություն*

«Նա և սուրբ ամուսնութիւն և սեր փեսայի ընդ հարսին և հարսին ընդ փեսայի, որ ազատ լինի ի պիղծ խառնից, չէ օտար ի հոգւոյն շնորհաց, որով և խորհուրդն ի Քրիստոս և յեկեղեցի աւարտի, ըստ առաքելոյն, թէ «խորհուրդս այս մեծ է. բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի». վկայելով Սողոմոնի բանիցն: Արդ որ զսուրբ ամուսնութիւնն պղծէ պիղծ խառնակութեամբ և չար գործովք, զեկեղեցւոյ խորհուրդ պղծէ, և զՔրիստոս անարգէ, որ այսմ օրինակն է:

Բայց մեք դեռ զառաջի եղեալ խորհուրդս մեկնեսցուք, և ցուցցուք. թէ ո՞րչափ սեր ունի աստուած առ մարդիկ. այնպէս, որպէս փեսայ ընդ հարսին. որպէս ասէ Եսայի, թէ «Որպէս ուրախ լինի փեսայ առ հարսին, այնպէս ուրախ լինի տէր ի քեզ»: Չոր և Դաւիթ իսկ ասէ յողբսն Յովնաթանու, թէ «Բազում ցաւ է սեր քո ինձ քան զսեր կանանց»: Արդ չիք յերկրի պատուականագոյն և առաւել քան զւէրն առն և կնոջ: Ապա եթէ ոմանց ոչ շատ կարծի և կարևոր, յաղագս այնր չթոյի՝ զի ոչ սրբութեամբ լինի եկեալ յամուսնութիւնն. և ոչ սրբութեամբ իցէ պահեալ զկուսութիւնն, այլ անառակ պղծութեամբքն իւրովք փախուցեալ իցէ յինքէնէ զշնորհս հոգւոյն: Իսկ որ անբիծ և անարատ զայ ի սուրբ յամուսնութիւնն, և անճառ սիրով սրբով հոգւոյն սրբոյ իցեն միաւորեալ ընդ միմեանս, այն օրինութեամբն օրհնին, որով Աղամն և Եւայն օրհնեալ միաւորեցան: Նա՛ որ այսպիսի սիրով և օրհնութեամբ լինին միաւորեալ,

ի վերայ իրերաց արեամբ չափ մեռանին: Նա ևս և վասն ընտանեաց սիրոյ բազումք ի Քրիստոսէ անկան և ուրացան ի հալածանաց ժամանակսն: Այլ և Ադամ ևս ի դրախտէն և ի լուսեղէն փառացն՝ յաղագս կնոջն սիրոյ մերժեցաւ և արտաքս անկաւ. և ոչ վասն աստուած լինելոյ, այլ ի նորա սիրոյն ծանր համարեցաւ քակիլ» (Էջ 275-276, ընդօծ. իմն է - Հ. Մ.):

Ի դեպ, Ադամի գործած մեղքի այսօրինակ բացատրությունը Էսայես տարբերվում է մինչ այդ եղած պաշտոնական ու ոչ պաշտոնական մեկնություններից: Ասենք նաև, որ Նարեկացին կնոջ գնահատության հարցում միանգամայն տարբերվում է իր ժամանակի, գուցեև հետագա դարերի արևելյան և արևմտյան մտածողներից: Հնարավոր է՝ սխալվում եմ, բայց վստահ եմ, որ ողջ համաշխարհային գրականության մեջ եթե դժվար է կնոջ և տղամարդու հավասարության մասին հստակ ասված դատողություն գտնել, ապա գրեթե անհնար է կնոջ առավելությունը փաստող միտք տեսնել: Բայց Նարեկացին, ըստ էության խորականություն չդնելով կնոջ և տղամարդու միջև, առանձին դեպքերում անհամեմատ դրականորեն է արտահայտվում կանանց մասին: Օրինակ, Երգ երգոցի մեկնության մեջ գրում է. «Դստերք Երուսաղէմի՛ արդարոցն ասէ, նա և հրեշտակացն ևս դստերս սովոր է կոչել. որ բազում անգամ կայ ի գիրս մարգարէականաց. զի գհամետություն ունին որպէս զկանայս. վասն զի պատկառելի է կանանց ազգ առաւել քան զարանց» (Էջ 283, ընդօծ. իմն է - Հ. Մ.):

Վերը բերված հատվածների համեմատությունը մեզ հանգեցնում է այն համոզման, որ Խրատի ու Մեկնության հեղինակը նույն անձն է, նույն մտածողը, որը կնոջ և տղամարդու սիրո ուժի անգերազանցելիության մասին նույն միտքը ձևակերպել է լեզվական տարբեր կաղապարներով՝ Խրատում հարցական-հոետորական, իսկ Մեկնության մեջ՝ պատմողական նախադասությամբ:

Այժմ փորձենք համեմատել Նարեկացու գլուխգործոցի և Խրատի բովանդակությունը՝ տեսնելու համար՝ կա՞րողոք որևէ ընդհանրություն, թե՞ ոչ:

«Մատեան ողբերգութեան» պոեմը՝ որպէս բանաստեղծի գրական-ստեղծագործական անցած ուղու յուրապատեական հանրագումար, ստեղծված լինելով Նարեկացու կյանքի վերջին շրջանում, վերապահ ձևով պարունակում է դրան նախորդած ստեղծագործություններում արտահայտված հիմնական գաղափարներն ու կիրառված գեղարվեստական հնարանքները: Ըստ այդմ, Խրատը Նարեկացու գրչին պատկանելու դեպքում նրա առանձին գաղափարներ ու մտածողության լեզվաոճական ինչ-ինչ տարրեր պետք է որ գտնվեն նաև Մատյանում: Իսկապես, ամենահարևանցի համեմատությունն իսկ հաստատում է մեր այս ենթադրության ճշմարտացիությունը:

Խրատի վերջնամասում, ամփոփելով մինչ այդ իր ասածները, հեղինակը եզրակացնում է. «Զի և այս իսկ է մարդ բոլորովին. ոգի և զօրութիւնք իւր, միտք և շարժմունք իւր, մարմին և զգայութիւն իւր. զոր պարտ է ըստ վերագրելոցդ ամենայն զգուշութեամբ պահել: Ոչ ընդ հրաժարեցուցեալսն ընտանեալ, և ոչ ի համարձակելոցն օտարանալ. զի մի՛ ի բարոք և յընտանի կայից սողոսկեալ ի վայր քարշեցի մարդն աստուծոյ, և բիծ ինչ արատոյ ընդ անարատ մաքրութիւնն խառնեցի՛ եղծանելով զնախատպին պատկերի լուսանկար՝ գեղեցկութիւն» (Էջ 531): Բերված հատվածի բովանդակությունը, միանգամայն համահունչ լինելով Մատյանի հիմնական ոգուն, շարադրանքի ձևով նույնպես հիշեցնում է այն. թե ինչո՞ւ,

Ուշագրավ է, որ լուսանկար բառը Նոր հայկազյան բառարանում վկայված է միայն Խրատի հենց այս մտքով և Գրիգոր ու Անանիա Նարեկացիների համապատասխան օրհնակներով, իսկ սպիտակեբանգ բառը՝ միայն Նարեկացու Խաչի ներբողով և Խրատով...

կտեսնենք ստորև: Ասենք նաև, որ ամփոփելով շարադրանքը, Խրատի հեղինակը գրում է. «Վասն այսորիկ պարտ է ամենայն ումեք փութայ, զի մի՛ ինչ նուագ ի պատշաճ առաքինութեանց գտանի. ըստ որում եցոյց բանս վերոյ, ըստ հոգոյ և մասանց իր, մտաց և շարժմանց իր, մարմնոյ և զգայութեանց իր» (էջ 532-533): Փաստորեն, հիմք ընդունելով մարդու եռամասնյա կառուցվածքը, Խրատում առաքինությունը նույնպես բաժանվում է երեք խմբի, բայց ներկա դեպքում մեզ հետաքրքրում է հատկապես շարադրանքի ձևը: Մատյանի Ջ գլխում բանաստեղծը, նկարագրելով մարմնական գլխավոր մեղքերը, իսկ ԼԸ գլխում՝ «Ջլուսածնելոցն զազատարարն արէնս հոգոյն կենաց, որ ի տէր Յիսուս» (տ. 7), դիմում է գրական նույն հնարքին և ըստ այդմ 94 անգամ (համապատասխանաբար՝ 63 և 31, քննական հրատարակության մեջ դրանք տրված են նույնքան տողով) ունենք նույն կաղապարը: Համեմատության համար հարկ էմ համարում բերել նշված գլուխների համապատասխան հատվածների առաջին և վերջին տները:

**Խրատ**

Ջի և այս իսկ է մարդ բոլորովին.  
 Ոգի և զօրութիւնք իր,  
 Միտք և շարժումք իր,  
 Մարմին և զգայութիւն իր,  
 Ջոր պարտ է ըստ վերագրելոցդ  
 Ամենայն զգուշութեամբ պահել:

-----  
 Ըստ հոգոյ և մասանց իր,  
 Մտաց և շարժմանց իր,  
 Մարմնոյ և զգայութեանց իր:

**Մատյան**

Ոմն եւ ծնունդք իր,  
 Ոմն եւ շտաւիդք իր,  
 Ոմն եւ բիծք իր,  
 Ոմն եւ արկածք իր,

-----  
 Աւագակապետն եւ գումարտակք իր,  
 Գազանն եւ կորիւնք իր,  
 Խածանողն եւ ծակտուածք իր,  
 Ապականագործն եւ նմանիք իր  
 (Ջ, տ. 41-104):

Թազաւորն եւ սիրեցեալք իր,  
 Արքայն եւ պատուաւորք իր,  
 Պսակեալն եւ իշխանականք իր,  
 Բարեհոչակեալն եւ հնչմունք իր,

-----  
 Որոտումն եւ ազդմունք իր,  
 Յոյսն վերին եւ փրկութիւն իր,  
 Ծառն արհնութեան եւ պտուղք իր,  
 Բարունակն եւ բարութիւնք իր  
 (ԼԸ, տ. 13-43):

Մատյանում Նարեկացին ոչ միայն ի խորոց սրտի գրուցում է Աստծո հետ, աղոթում ու աղաչում, այլև հաճախ բացատրում է նաև աղոթելու կարգն ու կանոնը: Նույնն ենք տեսնում նաև Խրատում: Մարդկային բոլոր առաքինություններից, հեղինակի կարծիքով, Աստծուն ամենահաճոն ու հարազատն աղոթքն է, որովհետև եթե մնացած ամեն ինչը սուկ նախապատրաստություն է Աստծու հետ հաղորդակցվելու համար, ապա աղոթքը ոչ այլ ինչ է, եթե ոչ «դէմ յանդիման խօսակցութիւն» Աստծու հետ (էջ 524): Եվ ինչպես «ամենայն աշխատութիւն երկրագործի վասն հաւաքելոյ զպտուղսն է, և տաժանումն խոհագործի յաղագս կերակրելոյ, այսպէս և ամենայն բարեգործութիւն և զգաստութիւն և պարկեշտութիւն վասն ճանապարհ գործելոյ մտացն անզբաղապէս՝ որպէս ընդ սիրելոյ բարեկամի աստուծոյ խօսակից լինել աղօթիւք, և զպէտս ամենայն կարեաց հոգևորաց և մարմնաւորաց անձին և աշխարհի առաջի դնել, և ի նմանէ զյաջողումն ամենայն բարութեան հայցել, և զփրկութիւն յորոգայթից թշնամոյն» (էջ 524, ընդգծ. իմն է - Ղ.Մ.): Մատյանում բանաստեղծն ասես կիրարկում է հենց այս սկզբունքը՝ «դեմ-

հանդիման գրուցել» Աստծու հետ որպես «սիրելի բարեկամի», որը և նրան հնարավորություն է տալիս Աստծու առջև անկեղծորեն բացահայտելու իր մարմնական ու հոգեկան, տեսանելի ու անտեսանելի բոլոր վերքերը, միաժամանակ խընդրելու փրկություն «յորոգայթից թշնամույն»։ Հիշենք Թեկուզ «Դրութիւնք»-ում Մատյանի բովանդակության հեղինակային թվարկումը՝ «յոգնաթախանձ բանից աւգտակարաց, ապաշաւանաց, հոգեշահ խրատուց, անձին ստգտանաց, զղջականաց կանոնաց կենաց»՝ կամատրական յանձնատութեանց, աներևութից յայտնութեանց, մեղանաց խոստովանութեանց, ցուցմունք գաղտնեաց, տարածմունք ծածկեցելոց, յանդիմանութիւնք թաքուցելոց, սպեղանիք զարաւորք վիրաց անբժշկականաց, դեղք ազդողականք ցաւոց անտեսականաց, հնարաւորութիւնք բազմամասնեայ երկանց վտանգից, ի դիմաց կարեաց ամենից բնութեանց, առիթք արտասուաց, պատճառք աղաւթից»։

Խրատի հեղինակը, հետևելով ավանդույթին, բացատրում է նաև աղոթքի կարգն ու կանոնները՝ ինչից սկսել ու ինչով ավարտել։ Ավելի պատշաճ է, գրում է նա, «նախ յաղագս տուելոց բարեացն գոհանալ, և ապա վասն առաջիկայիցն մաղթել։ Եւ ոչ միայն վասն անձին և տան և որդւոց և ընտանեաց զայս առնել, այլ և վասն ամենայն աշխարհի. իւրաքանչիւրոցն զպիտոյսն և զօգտակարսն տնօրինել՝ ըստ ոգւոյ և մարմնոյ։ Եւս առաւել ի վերայ թշնամեացն և ատելեացն, ըստ տեսոն բանին՝ թէ օրհնեցէք զանիծիչս ձեր, և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն զձեզ և հալածեն» (էջ 525)։ Մատյանում Նարեկացին աղոթում է ճիշտ այս սկզբունքով։

**Եւ արդ, զի՞նչ քեզ աղերս հաճոյական ի յայսմ եւ ի սոյն  
Եւ ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից,  
Գովեալ թագաւոր երկնաւոր Քրիստոս,  
Եթէ ոչ զառ ի յինէն անիծեալսն արհնել աղաւթն,  
Զկապեալսն արձակել, ազատել զդատարպարտեալսն,  
Բարեգործել զնզովեալսն, պսակել զթշնամանեալսն,  
Սփոփել զտրտմեցեալսն, դարմանել զխորտակեալսն,  
Խնամել զսարտուցեալսն, պատսպարել զեննգեալսն,  
Զվիրաւորեալսն ի մարմին՝ յոգի բժշկել։  
Եթէ արհնութեան բանի առ ոք մատուցայ՝ լուիցե՛ս,  
Իսկ եթէ անիծիք՝ մի՛ հայեցիս ընդունել, գթած (Բան ԾԵ, տ. 15-25)։**

Խրատում աղոթքի կարևոր պայման է համարվում և այն, որ նախ պետք է հաշտվել թշնամու հետ, սրտից վանել ամեն կարգի թշնամանք, չարություն ու ոխակալություն և մաքուր խղճով աղոթել՝ Աստծուց խնդրելով առաջին հերթին բարիք գործել թշնամիներին։ Ըստ այդմ, կարողում ենք. «Նա և թեպէտ լինի ունել ընդ ումեք թշնամութիւն, նախ հաշտել պարտ է ըստ տեսոն բանի և ապա յաղօթս մատչել։ ...զի նախ զհաշտութիւնն պարտ է առնել, և զամենայն ատելութիւն և զոխս լուծանել, և ապա յաղօթսն խնդրել նոցա բարիս ի տեսոնէ։ Եւ զայս առնել, զի և մեք առաւելապէս ընդ կարեօք ենք. քանզի անբաղդատելի են առ միմեանս՝ յանցանք մեր որ առ աստուած, և ընկերացն որ առ մեզ. ըստ թոռոյ բիր քանքարացն և հարիւր դահեկանին։ Յաղագս այնորիկ իրաւացի է թողոյ պարտապանին զսական, զի գտցուք և մեք թողութիւն բազմացն» (էջ 525)։ Մատյանի ՁԳ բանում Նարեկացին նույն ոգով գրում է.

**Յիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան  
Եւ գոր ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ ի բարի,  
Եւ արա կատարեա՛ նոցին քաւութիւն եւ ողորմութիւն։  
Մի՛ բարկացիս նոցա վասն իմ, տէր,**

**Իրեւ գտորքս բամբասողաց,**

**Առ յաճախ սիրող, որ ի յիս,**

**Այլ որպէս գշարս կշտամբողաց եւ իրաւամբք նախատողաց՝**

**Ներեա՛ յանցանաց նոցա (Բան ԶԳ, տ. 11-18):**

Դիտելի է, որ Նարեկացուն շուրջ հինգ դար հետո ապրած ֆրանսիացի բանաստեղծ Ֆրանսուա Վիյոնն Աստծուց խնդրում է ոչ թե ներել իր ռիսերիմ թշնամի եպիսկ. Թիբո դը Օսսինյին, այլ նրա հետ վարվել այնպես, ինչպես նա է վարվել իր հետ<sup>12</sup>:

Իսկ ինչո՞ւ պետք է անպայման ներել թշնամու մեղքերը և նոր միայն աղոթել: Պատասխանը խրատում տրված է շատ հստակ. «Քանզի ասաց տէրն. եթէ թողուցուք իրաքանչիւր եղբօր իրում ի սրտից ձերոց զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր. ապա թէ ոչ թողուցուք զյանցանս եղբարց ձերոց, և ոչ հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր: Արդ յաղագս այսպիսի սոսկալի և իրաւացի հրամանի պարտ է յամենայն սրտէ թողուլ պարտականացն և աղօթել սիրով ի վերայ նոցա. զի առ այս զմեզ արար աստուած իշխանս ի վերայ թողութեան մեղացն մերոց. զի որով սրտի մեք թողումք նոցա զմեր պարտսն, և սէր և գութ ցուցանեմք ի վերայ նոցա, ըստ այն չափոյ, և աստուած զմեր յանցանսն թողու, և զարարչական սերն և զգթութիւնն իւր սփռէ ի վերայ մեր» (էջ 525-526):

Մատչանում բանաստեղծն Աստծուց խնդրում է գթալ նախ իր թշնամիներին, ապա բարեկամներին: Ծիշտ է, մարդ արարածի համար դա արտասովոր ու անբնական երևույթ է, բայց գրողն այդպես է վարվում՝ էլնելով աստվածային պատվիրանի ոգուց. որքան ավելի ներողամիտ, հանդուրժող ու բարյացակամ գտնըվե՞նք այլոց հանդէպ, այնքան Աստված բարեհաճ կգտնվի մեր նկատմամբ, հետևաբար առ Աստված ուղղված մեր աղոթքը կլինի ավելի ընդունելի: Ըստ այդմ բանաստեղծը գրում է.

**Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ ի քէն բարի՝**

**Ատելեացն ինոց ի կարգ այս բանի,**

**Զի զհերքեալ վնասակարս պարտոց մահու**

**Յամենախնամ աչաց հգաւրիդ մի՛ մերժեացես, արհնեալ գթութիւն:**

**Արդ, կենագործեա՛ զիս՝ զամենամեղս, անդամաւք մարմնոյս,**

**Ընդ բնութեան հոգւոյս՝ խորհել միշտ զքոյսոյ:**

**Իսկ բարեգործացն խնդրել բարիս՝ բնութեանն են արէնք,**

**Անբռնադատ կրիցն յարակցապէս առ սոյնս բերումն:**

**Քանզի, արդարեւ, առ միդ այդ պատուէր ամենայն հասակ**

**գաւրանայ,**

**Իսկ միւտոյ՝ երկրորդի առաջնովդ խնամով հանդիպել՝**

**Աստուածականիդ է նմանութիւն,**

**Յաղագս այսր իրի նախնի դասեցի**

**Զթշնամեացն ինոց աղերսանս,**

**Քան զերախտաւորացն բարիս (Բան ԶԳ, տ. 88-101):**

Խրատի հեղինակը հասկանում է, որ անթիվ ու անհամար են մարդ արարածի գործած ու չգործած մեղքերը, հետևաբար ոչ ոք չի կարող, որքան էլ ջանա, մտաբերել ու խոստովանել դրանք: Ուստի աղոթքի ժամանակ ինչ հիշում, խոստովանում ու ապաշխարում է մեղավորը, անմիջապես սրբվում են, իսկ մյուսները մաքրվում են Բրիստոսի սուրբ արյան ու մարմնի ճաշակմամբ: «Սակայն գիտել պարտ է,- գրում է նա.- զի զամենայն մեղսն մինչ ի մանուսն իջանելով՝ ոչ ոք

<sup>12</sup> Տե՛ս **Франсуа Вийон, Я знаю все, но только не себя, М., 1999, էջ 36:**

կարէ գնտաւ ածել կամ խստովանել, թէ և բիր անգամ ջանայ... Արդ գոր մտածեացն և խոստովանեցաւ և ապաշխարեաց, այնու սրբեաց. և գոր ոչն կարաց յիշատակել, զայն մարմին և արին Քրիստոսի սրբէ» (Էջ 528): Գրեթէ նույնն ենք կարդում նաև Մատյանում.

Ջի թէպէտ եւ յոյժ բազում եմ մանուկն,  
Ի յափունս ջրոյն համահաւաքեայք.  
Այլ ուրոյնք եւ առանձնականք ի ծննդոց աճելութենէ:  
Իսկ մեղանք իմոց յանցանացս՝ անթիւք.  
Ջորս անհնար է առնուլ ի միտ.

Արդ, այսոքիկ պետք եմ գլխատրութեանց՝  
Ապականողաց ոգոց համայնից,  
Դասեայք ընդ ինքեամբք նուաճութիւնք մասանց,  
Իւրաքանչիւր ոք ի սոցանէ՝ բիրք բիրոց եւ հազարք հազարաց,  
Իսկ զհամայնիցս թիւ նա միայն զարէ իմանալ,  
Որ զառ ի մէնջ չէութիւնն գրեալ՝  
Իբր զէութիւն գործոց տեսանէ (Բան Զ, տ. 36-40, 104-110):

Թվում է, սխալված չեն լինի, եթե ասեմ, որ ներկա դեպքում գործ ունենք նույն հեղինակի նույն մտքի երկու տարբեր՝ արձակ և չափածո, ձևակերպումների հետ: Խստիվ դատապարտելով մարմնական պահանջմունքներն ու ցանկությունները բավարարելու ճանապարհին բնականի սահմաններից դուրս գալու՝ ժամանակակիցների ձգտումները՝ Խրատի հեղինակը չի ցանկանում մեկ առ մեկ թվարկել այդօրինակ անբնական շեղումներն ու այլանդակությունները, ուստի իր խոսքն ավարտում է այսպես. «Եւ զայլ գարշ և աղտեղագոյնսն լոտն որ յայնպիսի անհասնճարիցն գործի, գոր և գիտեմ և ընդ լսելիս է անցեալ. այլ ոչ կամիմ զագրացուցանել զբանս, զի մի՛ գուցէ ողջախոհ ոք լսելով տաղտկասցի. մանաւանդ թէ գիտողացն թողում. քանզի այժմ յայտոսիկ քաջահմուտք եմ ամենեքեան» (Էջ 504): Գրեթէ նույնն է ասվում նաև Մատյանի ԽԵ բանի Բ հատվածում. հակառակորդների կողմից իրեն առաջադրված մեղադրանքները ներկայացնելով որպես ինքնաբաժանման՝ բանաստեղծն այն ավարտում է հետևյալ տողերով.

Եւ գոր չէ ճառելի եւ կամ գրելի եւ կամ պատմելի  
Եւ կամ յերեսս դիմաց բերելի (Բան ԽԵ, տ. 71-72):

Ինչպես գիտենք, Մատյանի 3-րդ գլխում Նարեկացին շարադրել է Աստծու, իսկ 34-րդ գլխում Եռաստվածության մասին իր պատկերացումները: Խրատում շարադրված «ճշմարիտ հաւատոյ դասնութիւն»-ը էական ընդհանրություններ ունի թե՛ մեկի, թե՛ մյուսի հետ:

**Խրատ**

Եւ արդ այս է ճշմարիտ հաւատոյ դասնութիւն:  
Հաւատալ զաստուած հայր՝  
Հութիւն ճշմարիտ,  
գոյ կատարեալ,  
անեղ, անսկիզբն,  
անժամանակ, անպատճառ,  
անիմանալի, անտեսանելի,  
անճառելի, անհաս,  
պարզ, անզնին,  
անկէտ, անսահման,

**Մատյան**

Տէ՛ր իմ, տէ՛ր, տուիչ պարգեաց,  
իճքնաբուն բարի,  
Ամենից տիրող հաւասարապէս,  
միայն արարիչ զբնաս յոչէից,  
Փառաւորեալ անքնին,  
անեղ, անարկու,  
Սոսկալի ճգար, սաստիկ,  
Անտանելի, անմերձեցալի,  
անըմբռնելի, անիմանալի,  
Անճառելի, անտեսանելի,  
անզնելի, անշաշափելի,  
Անորոնելի, անսկիզբն, անժամանակ,

աներբ, անոր,  
անբովանդակելի, անայլելի,  
անփոփոխ, գերաբուն,  
գերագոյ, գերալոյս, գերանճառ:  
Ոչ լումեքէ եղեալ,  
և ոչ ինքն զինքն արարեալ.  
Ոչ ինչ յառաջ քան զճա,  
և ոչ զոյգ ընդ նմին.  
այլ ինքն գոլով սկիզբն  
և պատճառ ամենայնի,  
համագոյիցն ծննդեամբ  
և ելողութեամբ, և եղակա-  
նացն արարչութեամբ» (էջ 485):

Անշամանդաղ գիտութիւն,  
աներկեւան տեսութիւն,  
Ճշմարիտ Էականութիւն.  
բարձր եւ խոնարհ...  
(Բան Գ, տ. 1-9)  
... Ո՛չ անուամբ չափեալ  
եւ ո՛չ յորոշօրջմամբ նշանակեալ,  
Ո՛չ որակութեամբ նմանեալ  
եւ ո՛չ քանակութեամբ կշռեցեալ,  
Ո՛չ արիճակաւ ձևացեալ  
եւ ո՛չ որպիտութեամբ ծանուցեալ,  
Ո՛չ ի թերութենէ տարածեալ  
եւ ո՛չ ի լրմանէ ամփոփեալ,  
Ո՛չ ուրեք երբեքի գրաւեալ  
եւ ո՛չ ի տեղուջ վայրի երեւեալ  
(Լ Դ, տ. 45-49):

Մատյանի և Խրատի գաղափարական ընդհանրությունը լավագույնս տեսա-  
նելի է Երրորդության ըմբռնման հարցում, որի հիմքում, անշուշտ, դրված է Նի-  
կիայի հավատի հանգանակը: Ի հաստատումն ասվածի՝ բերենք մեկ օրինակ.

### *Խրատ*

Վասն զի ոչ ինչ առաւելութիւն և  
կամ նուագութիւն ի պաշտելի Եր-  
րորդութեանն տեսանի. այլ համայ-  
նիք գոլով զոյգ և հաւասար և միա-  
տր, բաց յանձնաւորութեանցն  
յատկութեանց, և որ նոցին հետևի.  
այսինքն զի հայր՝ հայր, և որդի՝ որ-  
դի, և հոգի՝ հոգի: Եւ ոչ է իմանալ և  
կամ ասել զհայր՝ որդի և կամ հոգի.  
և ոչ զորդի՝ հայր կամ հոգի. և ոչ  
զհոգի՝ որդի և կամ հայր: Այլ հայր՝  
միշտ հայր. և որդի՝ միշտ որդի. և  
հոգի՝ միշտ հոգի աստուծոյ (էջ  
486):

### *Մատյան*

Քանզի ոչ նախաթուելովն յԵրրորդու-  
թեանն որ մեծ ինչ, քան զմիւսն, եւ կամ ըզկ-  
նի անուանիլն՝ նուաստագոյն առ նմանն,  
եւ կամ ի միւսն ասելով՝ խառնակութիւն գոլ  
դիմացն, եւ կամ յերիցն տրոհումն՝ ուրոյ-  
նութիւն ել կամացն: Քանզի անմեծար  
Հայր ամենայնիւ, եթէ ոչ զԲանն ունիցի  
ինքեան զարութիւն, որպէս ոչ գոլով ընդ  
նմա Հոգւոյն՝ անհագագ ոմն և անկեանդան  
եւ առ ամենայն հրաման նուագեալ: Իսկ  
Բանն, եթէ ոչ անուամբ Հայրն ծանցիցի,  
որբ ոմն եւ կամ լքեալ եւ կամ ի մահացուէ  
ումեմնէ ոչէի: Որպէս և Հոգին, եթէ ոչ ի  
պատճառէն նշանակեսցի, ապաշուք ոմն  
թափառեալ եւ իբր զշունչ ինչ անդասելի  
(Բան, Լ Դ, տ. 98-106):

Կան բազմաթիվ այլ կարգի ընդհանրություններ ևս, օրինակ.

### *Խրատ*

Ըստ նախատեսացն կանխա-  
ձայնութեան (էջ 488):  
... անպարագիր և անվայրա-  
փակ գոլով բնութիւն (էջ 489):

### *Մատյան*

... Ըստ մարգարէին կանխաձայնու-  
թեան (Բան, Դ Գ):  
... անպարագիր և անվայրափակ տեղի  
ամենեցուն (Բան, Ի Գ):

Այժմ զուգադրաբար բերենք նույնական մտածողության մեկական օրինակ  
Խրատից, Մեկնությունից և Մատյանից, որը, կարծում եմ, շատ հետաքրքիր և խո-  
սուն է.

## Խրատ

«...ոչ թէ զի կա-  
րօտութիւն ունի  
աստուած մերոց  
պահոցն, այլ զի  
երևեսցուք ընդ  
հնազանդութեամբ  
հրամանի նորա»  
(Էջ 520):

## Մեկնություն

«Ոչ եթէ գործոյ ինչ,  
կամ պահպանութեան  
պէտս ունէր դրախտն,  
որ ամենայն վայելչու-  
թիւն և աստուածային  
պահպանութիւնն էր.  
այլ գործել զարդարու-  
թիւն. և պահել զպա-  
տուիրանն յատաջա-  
գոյն վարդապետաց»  
(Էջ 283):

## Մատյան

«Այլ ոչ եթէ կարատեալ իմոյս  
ինչ ճայնի այսու մեծանաս, որ  
մինչ չեւ ստեղծեալ էր քո զամե-  
նայն՝ նախ քան զլինելն երկնի  
փառաբանչաւքն անմահից եւ  
երկրաստեղծս բանաւորաւք, դու  
քեզէն ի քունդ լրութեան փառա-  
ւորեալ իսկ էիր.- այլ զի զմեր-  
ծեալս՝ զիս յարգեսցես, անճառ  
քաղցրութիւն, ճաշակել զքեզ բա-  
նիս հաղորդութեամբ» (Բան ԼԴ,  
տ. 123-128):

Ակնհայտ է, որ գործ ունենք տրամաբանական կառուցվածքով բացարձա-  
կապես նույնատիպ մտածողության՝ լեզվական տեսակետից մասնակիորեն  
տարբերվող ձևակերպումների հետ, որոնցից առաջին երկուսը առանձին-առան-  
ձին ավելի նման են Մատյանին, քան իրար, և դա միանգամայն բնական է, քան-  
զի Մատյանը՝ որպես բանաստեղծի զարմանահրաշ գլոխագործոց, յուրատեսակ  
խտացումն ու հանրագումարն է հեղինակի անցած ողջ ուղու և այդ ճանապարհին  
ունեցած գրական, գիտական, փիլիսոփայական, աստվածաբանական, բարոյա-  
կան, գեղագիտական և հատկապես լեզվական ձեռքբերումների:

Վերջում հարկ եմ համարում նորից անդրադառնալ Խրատի և Նարեկացու  
ստեղծագործությունների բառապաշարի ընդհանրությանը, որը, կարծում եմ,  
յուրջ կովան կարող է ծառայել Խրատը Նարեկացու գրչին պատկանելու մասին  
վարկածը հաստատելու համար: Նոր հայկազյան բառարանի առաջին հատորում  
Արարչաբար բառհողվածից մինչև Արարչութիւն բառհողվածը ներառյալ կա 31  
բառհողված, որոնցից 14-ի համար (Արարչագիր, Արարչակերտ, Արարչակիր, Ա-  
րարչանորոգ, Արարչաստեղծ, Արարչատես, Արարչընկալ, Արարչական, Արար-  
չակից, Արարչապարգել, Արարչապէս, Արարչատուր, Արարչաւանդ, Արարչու-  
թիւն) վկայություններ են բերված նաև Նարեկացու երկերից, ընդ որում՝ առաջին  
յոթը վկայված են միայն Նարեկացիով: Ինչ վերաբերում է Խրատին, ապա այն  
վկայված է միայն Արարչագիր բառի համար, բայց ունի նաև Արարչական (էջ  
526), Արարչութիւն (էջ 510) և Արարչաստեղծ (էջ 531) բառերը, որոնցից առանձ-  
նապես ուշագրաւ է վերջինը, որը, ինչպես ասացինք, բառարանում վկայված է  
միայն Նարեկացիով: Դիտելի է և այն պարագան, որ եթէ միայն Նարեկացիով  
վկայված բառերից առաջինը Արարչագիրն է, ապա Խրատը վկայված է միայն  
Արարչագիր բառի համար: Ասենք նաև, որ խնդրո առարկա 31 բառից Նարեկա-  
ցու հայր Խոսրով Անձնացու «Պատարագի մեկնություն» աշխատությունը վկայ-  
ված է Արարչագործութիւն և Արարչապարգել բառերի համար:

Մեկ հողվածում հնարավորություն չունենալով ներկայացնելու նկատածս  
այսօրինակ բոլոր ընդհանրությունները՝ այնուամենայնիվ հարկ եմ համարում ըն-  
թերցողի դատին հանձնել ևս մեկ օրինակ.

## Խրատ

Թողում և զերգոյ երգոյն բան, որ ի  
սկզբանէ մինչ ի կատարած զնոյն յեղ-  
յեղէ՝ մարմնաւորօքն զհոգևորսն  
տպացուցանելով. ոչ այլ ինչ այսու  
յատնելով, քան եթէ զառաւելութիւն

## Ներբող Սրբոյ խաչին

Ընդ սոյն հարմարեա և զերգ երգո-  
ղին, որ յայտնէ քեզ զհղձս բաղձա-  
նաց հարսինն ի սէր փեսային. ո՞ր  
հովուես քաջ հովիւ, ասելով, ո՞ր  
հանգուցանես զհօտ քո ընտրեալ ի

անչափ սիրոյն Քրիստոսի որ առ հա-  
ւատացեալս իր (էջ 532):

միջօրէի, հովանիդ խնամոց նոցին  
կառուցեալ (էջ 395)<sup>11</sup>:

Թվում է՝ նույնիսկ ավելորդ է ասել, որ չնայած բառամթերքի էական տարբե-  
րությանը, այս երկու հատվածների հեղինակը նույն ինքը Գրիգոր Նարեկացին է:

Կարծում եմ, այսքանն արդեն լիովին բավական է եզրակացնելու, որ Խրա-  
տը Նարեկացու գրչի լավագույն արգասիքներից է և այսուհետ պետք է դիտվի  
նրա մատենագրական ժառանգության անկապտելի մաս: Ավելին, դրանով իսկ  
պարզվում է, որ Երգ երգոցի մեկնությունն գրելու թագավորական պատվեր ստա-  
նալուց առաջ տակավին երիտասարդ Գրիգոր Նարեկացին արդեն ճանաչված է  
եղել (գոնե Անձնացյաց թագավորության սահմաններում) որպես խորաթափանց  
մտքի տեր մտածող, որին դիմում, իրենց հետաքրքրող հարցերի շուրջ նրա կար-  
ծիքն էին ցանկանում իմանալ ժամանակի ուսյալներից շատերը, այդ թվում և՛  
Անձնացյաց թագավոր Գուրգեն-Խաչիկ Արծրունին:

Իբրև բարոյախոսական բնույթի աշխատություն՝ Խրատն իր մեջ ամփոփում  
է Նարեկացու աշխարհայացքի բնորոշ գծերի խտացած շարադրանքը, որի ու-  
սումնասիրությունը կարող է մեծապես նպաստել ինչպես հանճարեղ բանաստեղ-  
ծի գրական-մատենագրական ժառանգության, այնպես էլ հատկապես նրա  
գլուխգործոցի՝ «Մատենան ողբերգութեան» պոեմի հիմքում ընկած կրոնաստվա-  
ծաբանական և բարոյափիլիսոփայական սկզբունքների բացահայտմանը: Վեր-  
ջապես, Խրատի լեզվի մասնագիտական քննությունը կարող է էապես հարըս-  
տացնել Նարեկացու ցարդ իրավամբ անգերազանցելի համարվող լեզվամտա-  
ծողության և լեզվաշինարարության մասին պատկերացումը: Իսկ այդ ամենը լա-  
վագույնս կարող է ի հայտ գալ հատկապես Խրատի գիտաքննական բնագրի  
ստեղծմամբ, որը, անվարան կարելի է ասել, օրախնդիր պահանջ է:

**Г. К. МИРЗОЯН - К вопросу о литературном наследии Григора Нарека-**  
**ци.** - В статье сделана попытка внести ясность в вопрос об авторстве традицией  
приписанного Нарекаци «Краткого слова назидания». Детально сопоставляя со-  
держание «Назидания» и бесспорно принадлежащих Нарекици произведений —  
«Толкования Песни песней» и «Книги скорби», — автор приходит к убеждению,  
что «Назидание» принадлежит именно перу Григора Нарекаци и что написано  
оно 1-2 годами ранее «Токования Песни песней». Далее предполагается, что, по  
всей вероятности, знакомство с этим произведением и дало основание царю  
Гургену-Хачику поручить Нарекаци толкование Песни песней.

По мнению автора, «Назидание» как нравоучительное произведение в сжа-  
том виде содержит характерные черты мировоззрения Нарекаци, и, соответст-  
венно, его изучение может существенно способствовать раскрытию религиозно-  
теологических и этико-философских принципов, лежащих в основе как литера-  
турного наследия Нарекаци вообще, так и в частности, его шедевра - поэмы  
«Книга скорби». Наконец, научное изучение языка этого памятника может рас-  
ширить представление о поныне справедливо считающемся непревзойденным  
языковым мышлении и языкотворчестве Нарекаци. Необходимым условием пло-  
дотворного изучения «Назидания» в означенных направлениях является, несо-  
мненно, создание его научно выверенного критического текста.

<sup>11</sup> Ի դեպ, Խաչի Արքրողում ևս Նարեկացին քանիցս գործածում է «յեղյեղեմ» բառը  
(տե՛ս էջ 393, 394):